



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի երկրորդ եռամսյակում (վերլուծություն)

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 44432 գործարք, որոնց քանակը 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 15.9 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 5.9 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11323 օտարման գործարքի 72.6 %-ը կազմել է առուվաճառքը, 26.6 %-ը՝ նվիրատվությունը և 0.8 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.3 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 36.6 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի երկրորդ եռամսյակում, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 8.4 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 8.4 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.3 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի երկրորդ եռամսյակում, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 21.0 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 1.7 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երկրորդ եռամսյակ 2015 թ.	Երկրորդ եռամսյակ 2016 թ.	Առաջին եռամսյակ 2016 թ.
Կենտրոն	428000	428100	428000
Արաբկիր	356600	357100	356900
Քանաքեռ-Զեյթուն	282700	283100	283000
Նոր Նորք	253200	254200	253800
Ավան	260700	261600	261400
Էրեբունի	252000	252300	252300
Շենգավիթ	257100	257600	257500
Դավթաշեն	275800	276700	276450
Աջափնյակ	250100	251000	250750
Մալաթիա-Սեբաստիա	243200	244050	243850
Նուբարաշեն	156800	157300	157100
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	274200	274800	274600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 0.1 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 907 բնակարան, որի քանակը, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 9.5 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 9.8 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Երկրորդ եռամսյակ 2015 թ.	Երկրորդ եռամսյակ 2016 թ.	Առաջին եռամսյակ 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116050	116000
	Ապարան	57700	58400	58200
	Թալին	66000	66800	66600
Արարատ	Արտաշատ	97900	98800	98600
	Մասիս	115800	115800	115800
	Վեդի	101200	101700	101600
	Արարատ	76400	77500	77300
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200	154200
	Արմավիր	121200	121250	121200
	Մեծամոր	87500	87600	87600
Գեղարքունիք	Սևան	99200	99400	99400
	Գավառ	60100	60550	60400
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44850	45250	45100
	Ճամբարակ	28700	28750	28750
Լոռի	Վանաձոր	88500	88600	88600
	Ստեփանավան	74600	74750	74700
	Սպիտակ	99800	99850	99850
	Ալավերդի	55200	55800	55500
	Տաշիր	47300	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20300	20500	20500
Կոտայք	Աբովյան	155100	155150	155100
	Նոր Հաճն	128550	128550	128550
	Բյուրեղավան	108200	108250	108200
	Եղվարդ	109400	109850	109650
	Հրազդան	63800	63900	63900
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109200	109450	109300
	Արթիկ	66800	67250	67100
	Մարալիկ	40750	41050	40950
Սյունիք	Գորիս	122950	123650	123500
	Կապան	94000	95000	94800
	Սիսիան	91950	92200	92100
	Մեղրի	81800	82950	82800
	Ագարակ	47300	47700	47600
	Քաջարան	94600	94900	94700
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95100	95100
	Եղեգնաձոր	125600	126200	126000
	Ջերմուկ	112950	113200	113100
Տավուշ	Դիլիջան	114000	115500	115300
	Իջևան	118350	118550	118500
	Բերդ	60200	60450	60400
	Նոյեմբերյան	49900	50400	50300
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2016 թվականի երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 990 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 316 գործարք, մարզերում՝ 674 գործարք: 2016 թվականի երկրորդ եռամսյակում, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 4.5 %-ով, ընդ որում, Երևանում՝ 27.9 %-ով, մարզերում նվազել՝ 3.7 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9.0 %-ով, ընդ որում, Երևանում՝ 6.8 %-ով, իսկ մարզերում՝ 10.0 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երկրորդ եռամսյակ 2015 թ.	Երկրորդ եռամսյակ 2016 թ.	Առաջին եռամսյակ 2016 թ.
Կենտրոն	476100	476200	476100
Արաբկիր	383000	383100	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250100	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238100	238000
Նուբարաշեն	150800	150800	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ

շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Երկրորդ եռամսյակ 2015 թ.	Երկրորդ եռամսյակ 2016 թ.	Առաջին եռամսյակ 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41150	41100
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100200	100900	100800
	Ստեփանավան	90300	91200	91100
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամբուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157300	157300
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
Շիրակ	Չարենցավան	83000	83000	83000
	Գյումրի	118700	119250	119250
	Արթիկ	63100	63450	63400
Սյունիք	Մարալիկ	52000	52000	52000
	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100200	100700	100650
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84600	84600
	Ագարակ	46900	46900	46900
Վայոց ձոր	Դաստակերտ	11610	11610	11610
	Վայք	90050	90150	90150
	Եղեգնաձոր	116600	116750	116750
	Զերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113700	115600	115450
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 4122 միավոր (2091.13 հա) հող, որից Երևանում՝ 293 միավոր (27.85 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 2498 միավոր (1942.48 հա), որից Երևանում՝ 17 միավոր (5.49 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 1100 միավոր (90.03 հա), որից Երևանում՝ 134 միավոր (8.36 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 395 միավոր (45.54 հա), որից Երևանում՝ 136 միավոր (13.59 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 38 միավոր (7.96 հա), որից Երևանում՝ 5 միավոր (0.40 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 13 միավոր (3.41 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 77 միավոր (1.68 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.002 հա)
- ջրային հող՝ 1 միավոր (0.03 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում օտարված հողերից 3272 միավորի (1683.51 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 197 միավոր (16.90 հա), նվիրատվության գործարք՝ 786 միավոր (397.29 հա), որից Երևանում՝ 48 միավոր (4.13 հա) և փոխանակության գործարք՝ 64 միավոր (10.33 հա), որից Երևանում՝ 48 միավոր (6.82 հա):

Հանրապետությունում 2016 թվականի երկրորդ եռամսյակում 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 23.9 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 26.9 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 15.5 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 15.4 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 356.92 հա, որից 333.52 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 21.8 %-ը կամ 712 միավորը (313.09 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 73 միավոր (3.32 հա), իսկ 77.8 %-ը կամ 2535 միավորը (1370.01 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 119 միավոր (13.40 հա): 2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 25 գործարք (0.40 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2016 թվականի երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	2	0.29	25	1.78	46	1.24	14	4.79	2	0.10	69	5.34	34	3.18
Արագածոտն	31	30.12	1	0.01	7	0.15	12	0.46	191	114.70	2	0.01	47	4.46	3	0.10
Արարատ	37	103.13	2	0.41	29	2.19	17	1.32	185	101.27	0	0.00	103	9.22	15	0.53
Արմավիր	12	14.99	0	0.00	4	0.09	6	0.07	178	201.75	1	0.02	123	11.41	9	0.32
Գեղարքունիք	20	44.25	3	0.32	10	1.01	36	4.29	42	48.61	6	0.47	46	4.75	3	0.61
Լոռի	5	3.00	3	0.16	15	0.52	15	1.19	637	330.85	3	0.04	30	2.70	11	0.64
Կոտայք	49	43.69	3	0.09	91	4.41	26	1.50	268	289.83	1	0.24	157	13.83	19	2.13
Շիրակ	2	0.52	2	3.17	12	0.22	4	0.06	96	74.57	0	0.00	21	1.84	7	0.81
Սյունիք	24	20.73	2	0.06	14	0.40	7	0.35	75	67.24	0	0.00	11	0.72	2	0.04
Վայոց ձոր	13	20.48	0	0.00	5	0.04	8	0.19	66	45.53	0	0.00	12	1.50	1	0.01
Տավուշ	5	1.72	0	0.00	9	0.44	18	0.26	23	23.65	0	0.00	15	1.19	4	0.49
Ընդամենը	198	282.63	18	4.51	221	11.25	195	10.93	1775	1302.79	15	0.88	634	56.96	108	8.86

Ստորև ներկայացված է 2016 թվականի երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	38	0.83	2	0.29	18	0.20	18	0.34	35	2.48	0	0.00	0	0.00	7	1.59	28	0.89
Արագածոտն	4	0.15	0	0.00	0	0.00	4	0.15	42	28.03	26	27.57	1	0.01	7	0.15	8	0.30
Արարատ	2	0.08	0	0.00	1	0.06	1	0.02	83	106.98	37	103.13	2	0.41	28	2.13	16	1.31
Արմավիր	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	20	14.67	11	14.52	0	0.00	3	0.08	6	0.07
Գեղարքունիք	7	0.14	0	0.00	4	0.12	3	0.02	62	49.73	20	44.25	3	0.32	6	0.89	33	4.27
Լոռի	5	0.04	0	0.00	2	0.01	3	0.03	33	4.83	5	3.00	3	0.16	13	0.51	12	1.16
Կոտայք	33	0.23	0	0.00	31	0.08	2	0.15	136	49.45	49	43.69	3	0.09	60	4.32	24	1.35
Շիրակ	9	0.17	0	0.00	7	0.15	2	0.02	9	3.29	0	0.00	2	3.17	5	0.08	2	0.04
Սյունիք	10	0.08	1	0.03	7	0.02	2	0.03	37	21.46	24	20.73	1	0.03	7	0.38	5	0.32
Վայոց ձոր	3	0.07	0	0.00	1	0.03	2	0.04	23	20.65	13	20.48	0	0.00	4	0.02	6	0.15
Տավուշ	1	0.04	0	0.00	1	0.04	0	0.00	30	1.88	4	1.22	0	0.00	8	0.40	18	0.26
Ընդամենը	113	1.84	3	0.32	73	0.72	37	0.80	510	303.45	189	278.59	15	4.19	148	10.55	158	10.12

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 9 գործարք (4.05 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի երկրորդ եռամսյակում, 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 10.1 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 52.2 %-ով, իսկ մարզերում նվազել՝ 12.7 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 7.8 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 24.9 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 21.1 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	15	13.22	86.7	4498.3	787.9	116	48.89	365.0	12000.0	3431.8
Ապարան	2	0.51	140.4	3743.3	1941.8	11	6.90	86.5	2727.3	631.8
Թալին	8	13.74	37.9	244.9	137.4	44	18.92	93.6	5494.5	754.5
Ծաղկահովիտ	1	0.08	3410.5	3410.5	3410.5	20	39.99	79.5	1000.0	386.0
Արարատի մարզ										
Արտաշատ	27	24.46	73.2	36316.8	3090.0	86	35.69	335.1	10833.3	2709.6
Մասիս	3	3.08	97.5	1866.4	1076.9	39	18.96	200.0	11904.8	3231.6
Վեդի	7	75.59	45.0	327.7	120.7	53	42.58	207.0	10795.1	1979.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						80	50.10	294.3	9090.0	1355.2
Բաղրամյան	1	0.41	76.5	76.5	76.5	37	115.91	90.6	2561.1	922.1
Վաղարշապատ	10	14.11	63.2	607.3	203.5	53	32.42	444.4	11764.7	1953.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	6	3.72	163.5	663.8	577.9	17	8.05	199.8	1875.0	501.7
Ճամբարակ						1	0.18	60.5	953.3	352.0
Մարտունի	4	4.35	64.6	381.1	144.0	2	1.03	51.1	2850.0	780.0
Սևան	5	6.19	180.0	1221.0	708.7	5	3.27	52.2	2134.8	355.0
Վարդենիս	5	29.99	133.8	885.6	454.9	17	36.09	41.2	2575.1	400.0
Լոռու մարզ										
Ալավերդի						25	10.88	170.4	6424.2	566.7
Գուգարք	4	1.82	199.0	1456.2	788.2	7	3.36	234.6	6065.9	810.0
Սպիտակ						12	3.37	250.0	5555.5	675.0
Ստեփանավան						21	15.34	90.6	1686.6	420.5
Տաշիր	1	1.18	168.1	168.1	168.1	569	291.28	45.3	1384.4	185.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	21	8.02	142.5	2760.3	653.0	70	96.78	279.3	11942.7	3914.7
Եղվարդ	19	29.56	44.6	5712.6	894.1	159	174.57	174.4	11971.8	2517.7
Հրազդան	9	6.12	123.9	448.9	243.6	24	12.73	130.5	10256.4	984.5

Շիրակի մարզ										
Ախուրյան						27	27.48	252.0	1693.1	648.0
Ամասիա						2	2.88	40.9	261.0	136.5
Անի						33	20.91	110.6	546.9	455.8
Աշոցք						4	2.12	58.5	215.8	138.5
Արթիկ						27	20.92	79.4	1428.6	512.3
Սյունիքի մարզ										
Գորիս						8	11.65	92.6	1023.2	787.5
Կապան	8	4.41	143.8	931.9	375.2	23	12.89	120.0	841.6	441.8
Մեղրի	16	16.31	77.0	1246.3	379.5	10	2.66	193.0	3000.0	806.7
Սիսիան						33	39.89	46.3	1977.4	589.8
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	13	20.48	21.7	1156.4	166.7	25	14.54	125.0	10000.0	1751.0
Վայք						41	30.99	58.8	1430.7	595.0
Տավուշի մարզ										
Բերդ						5	0.98	213.3	3783.8	690.0
Իջևան	1	0.77	1300.0	1300.0	1300.0	15	19.31	267.5	9454.5	1514.7
Նոյեմբերյան	3	0.45	726.1	5806.9	3266.6	3	3.36	46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2016 թվականի երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	1252.5	2274.5	3673.5	2448.8	36	32070.0	130.7	22200.0	2591.5
Ապարան	1	263.2	539.5	539.5	539.5	7	7243.0	124.1	609.6	390.0
Թալին						3	2543.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	2790.0	60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ	7	6867.6	538.0	851.5	694.4	27	29167.2	173.9	7140.3	905.3
Մասիս	16	11975.2	535.3	3292.9	1907.6	61	44396.6	187.5	25000.0	1207.5
Վեդի	5	2491.4	683.3	2350.4	1021.1	14	17626.0	126.1	5000.0	665.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	840.4	555.0	3528.0	2784.7	47	43502.0	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան								100.0	833.3	240.0
Վաղարշապատ						70	64226.6	197.4	26528.4	1529.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	4636.0	850.5	850.5	850.5	10	9896.6	186.6	1084.3	683.6
Ճամբարակ						2	1377.0	71.3	2286.2	146.8
Մարտունի	3	3342.0	165.0	404.9	252.4	25	27046.8	119.3	5000.0	280.5
Սևան	1	947.9	410.5	410.5	410.5	5	4313.0	240.0	3110.4	340.0
Վարդենիս						4	4824.0	72.5	987.2	151.1

Լոռու մարզ										
Ալավերդի	4	1813.2	398.4	2750.1	1204.5	16	15066.5	114.3	1388.9	217.0
Գուգարք	6	1366.4	261.3	2305.5	1534.9	4	2605.0	77.9	14083.3	1260.3
Սպիտակ	1	605.1	736.2	736.2	736.2	6	5790.0	104.9	1348.3	200.1
Ստեփանավան	1	1177.6	173.2	173.2	173.2	2	1990.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	1	165.0	316.5	316.5	316.5	1	600.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	38	27716.9	352.9	5434.3	2751.9	71	58972.7	264.5	35353.5	1949.5
Եղվարդ	21	15108.6	445.6	4425.0	2198.7	69	57233.3	173.6	27000.0	2856.1
Հրազդան	1	422.0	3234.8	3234.8	3234.8	12	17283.0	117.7	34848.5	1318.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	311.2	8495.9	10500.0	9498.0	4	4066.4	113.6	18750.0	334.1
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	1	400.0	464.9	464.9	464.9	8	11022.4	67.9	180.6	209.3
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	2	54.0	2875.2	2875.2	2875.2	7	3189.0	111.8	5000.0	217.8
Սյունիքի մարզ										
Գորիս						3	1970.0	112.2	1700.0	367.4
Կապան	4	1844.9	266.4	2500.0	1374.8	2	2363.0	67.9	2638.9	355.0
Մեղրի						5	2397.4	68.5	632.9	270.0
Սիսիան	3	2000.0	554.4	580.8	572.0	1	480.0	123.5	875.0	250.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						11	14270.0	96.7	7659.6	506.0
Վայք	4	174.3	1050.0	1068.7	1054.7	1	770.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	594.0	75.8	810.0	125.3
Իջևան	5	1742.8	580.9	3000.0	1407.7	13	10287.3	74.1	14423.1	512.9
Նոյեմբերյան	3	2245.9	891.0	891.0	891.0			125.0	1948.1	252.0

2016 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1976 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.4 %-ը:

2016 թվականի երկրորդ եռամսյակում, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 9.1 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 3.5 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 103 բնակարանի, 169 անհատական բնակելի տան, 971 հասարակական նշանակության, 197 արտադրական նշանակության օբյեկտի, 497 միավոր հողի և 39 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 23 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 91.7 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 9.5 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1759.71 հա հողից 3.27 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 1756.44 հա հողից 1726.49 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 20.31 հա արդյունաբերական օբյեկտի, 0.22 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 692.73 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5490 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.4 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 44.5 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 24.0 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (50.2 %), անհատական բնակելի տների (22.1 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.9%) և հողերի (9.8 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3004 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 48.0 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 21.8 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 5236.79 հա հող, որից 14.80 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 17.2 %-ը կամ 903.20 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.21 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Սյունիքի մարզում՝ 2859.59 հա:

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 463 գործարք, որից 291-ը՝ Երևանում: 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 56.4 %-ով, ընդ որում Երևանում՝ 37.3 %-ով, մարզերում՝ 2.0 անգամ, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 19.9 %-ով, ընդ որում Երևանում՝ 2.8 %-ով, մարզերում՝ 67.0 %-ով:

2016 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 5246 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2016 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 15.2 %-ով, իսկ 2015 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 13.5 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.8 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (26.2 %):

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե